Արձանագրություն թիվ 5

<< ՎՔ - ԲԸԱՀ-ԱՇՁԲ – 15>>

ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Վայք 16 փետրվարի 2016թ. ժամը 16:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
նախագահ Ա. Սմբատյանը
անդամներ՝ Գ. Մուշկամբարյանը, Ռ. Հակոբյանը
քարտուղար՝ Ն. Մարկոսյանը

30.12.2015թ. Վայքի քաղաքապետարանի կողմից կայացած << *ՎՔ - ԲԸԱՀ-ԱՇՁԲ – 15*>>> ծածկագրով առանց հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով հայտերի բացման նիստում գնահատող հանձանժողովի կողմից կայացված որոշման արդյունքում <<Նոր- Էներջի>> ՍՊԸ –ի կողմից 08.01.2016թ. բողոք է երկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդ:

20.01.2016թ. ԳԲԽ –ի կողմից թիվ 01/16 որոշմամբ բավարարվել է նշված կազմակերպության բողոքը՝

Դադարեցնել Վայոց Ձոր մարզի Վայքի քաղաքապետարանի կողմից գնահատող հանձնաժողովի 2015թ դեկտեմբերի 30-ին <<Նոր -Էներջի>> ՍՊԸ –ի հայտում ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթերը առկա չլինելու, հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան ճանաչելու և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները:

Նույն ծածկագրով գնման շրջանակներում 15.01.2016թ. <<Մավշին>> ՍՊԸ-ն բողոք է ներկայացրել ԳԲԽ՝ 27.01.2016թ.: ԳԲԽ-ն թիվ 02/16 որոշմամբ մերժել է <Մավշին> ՍՊԸ –ի կողմից ներկայացված բողոքը՝ հայտը վերանայելու և <<Մավշին>> ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին:

29.01.2016թ. ին <Մավշին> ՍՊԸ-ն կրկին բողոք է ներկայացրել ԳԲԽ: 10.02.2016թ. ԳԲԽ-ն թիվ 06/16 որոշմամբ բավարարել է <Մավշին> ՍՊԸ –ի բողոքը՝

Դադարեցնել Վայոց Ձոր մարզի Վայքի քաղաքապետարանի կողմից գնահատող հանձնաժողովի 2015թ դեկտեմբերի 30-ին <<Մավշին>> ՍՊԸ –ի հայտում ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթերը առկա չլինելու, հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան ճանաչելու և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները:

Հանձնաժողովը ղեկավարվելով ԳԲԽ –ի կողմից կայացրած որոշումներով, իրականացրել է նշված կազմակերպությունների կողմից ներկայացրած հայտերի գնահատում:

1. Ընդունել ի գիտություն, որ հայտեր ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

1-ին չափաբաժին

N	Մասնակցի	
	Անվանումը	Հասցեն
1	«Մավշին» ՍՊԸ	Վայոց ձորի մարզ, գ. Զառիթափ
2	«Նոր-Էներջի» ՍՊԸ	ք. Երևան, Առաքելյան փ. 25/5

2-րդ չափաբաժին

N	Մասնակցի	
	Անվանումը	Հասցեն
1	«Մավշին» ՍՊԸ	Վայոց ձորի մարզ, գ. Զառիթափ
2	«Նոր-Էներջի» ՍՊԸ	ք. Երևան, Առաքելյան փ. 25/5

1.2 Մանակիցները /մասնակիցը/ ծրարները կազմել և ներկայացրել են հրավերի պահանջներին համապատասխան.

1.3 մասնակիցների գնային առաջարկներում պահանջվող փաստաթղթերը առկա են, որոնք կազմված են սահմանված պահանջներին համապատասխան.

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

2. Ընդունել ի գիտություն, որ մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

1-ին չափաբաժին

N	Մասնակցի			ԱԱՀ	Ընդամենը
	Անվանումը	Հասցեն	ներկայացրած գնային առաջարկը առանց ԱԱՀ /դրամ		
1	«Մավշին» ՍՊԸ	Վայոց ձորի մարզ, գ. Զառիթափ	45100000	9020000	54120000
2	«Նոր-Էներջի» ՍՊԸ	ք. Երևան, Առաքելյան փ. 25/5	48710255	9742051	58452306

2-րդ չափաբաժին

N	Մասնակցի			ԱԱՀ	Ընդամենը
	Անվանումը	Հասցեն	ներկայացրած գնային առաջարկը առանց ԱԱՀ /դրամ		
1	«Մավշին» ՍՊԸ	Վայոց ձորի մարզ, գ. Զառիթափ	47630000	9526000	57156000
2	«Նոր-Էներջի» ՍՊԸ	ք. Երևան, Առաքելյան փ. 25/5	48757170	9751434	58508604

3. Գնային առաջարկների գնահատման արդյունքում հիմք ընդունելով, որ <Մավշին> ՍՊԸ-ն ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ, գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել <<ՄԱՎՇԻՆ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

4. <Մավշին> ՍՊԸ-ին առաջարկել կնքել պայմանագիր մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սմբատյան

Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Մուշկամբարյան

Ռ. Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Մարկոսյան